ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ IX—XI ԴԱՐԵՐՈՒՄ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Տասներորդ դարում Հայաստանն ապրում է ֆեոդալական մասնատվածության ժամանակաշրջան։ Հայաստանի հազիվ գլուխ եկած պետական ամբողջացումը սկսում է տալ իր առաջին ճեղքերը։ Առաջանում են տեղական նշանակություն ունեցող մի քանի թագավորություններ, որոնցից առանձնակի դեր ուներ Վասպուրականի թագավորությունը, որը Հայաստանի բոլոր տեղական թագավորություններից տնտեսական, քաղաքական և մշակութային ամենարարձր ծաղկման հասավ։

Վաղ միջնադարում Վասպուրականի տերիտորիան բաժանված էր նախարարական մի քանի տների միջև[1]։ Այդ շրջանում Արծրունիները տիրում էին սոսկ Աղբակին և Մարդաստանին։ Հետագայում նրանք զորեղանում են և աստիճանաբար տիրանում Ռշտունի, Անձևացի, Ակեացի, Դնունի և այլ տների կալվածներին։ VIII դարի երկրորդ կեսին Վասպուրականը միավորվում է Արծրունիների իրավասության ներքո։ Վասպուրականը շրջապատված էր ամիրայություններով, որոնք զորեղ էին հատկապես Վանա լճի կողմերում։ Տերիտորիալ այս գոտին պատռելը դառնում է հրամայական պահանջ Վասպուրականի հետագա զարգացման, համահայկական միությունից նրա դուրս չմնալու համար։ Արծրունիները քանիցս ընդհարումներ ունեցան Արբերանիի ութմանկների և Ապահունիքի կայսիկների հետ։

Դերենիկ Արծրունին (846—885) ձեռնամուխ եղավ նաև Տարոնը իր իրավասության տակ դցելու գործին։ Տարոնում այդ շրջանում շարունակում էին իշխել Բագրատ Բագրատունու որդիներ Աշոտն ու Դավիթը։ Վերջինս ամուսնանում է Դերենիկ Արծրունու քրոջ՝ Մարիամի հետ[2]։ Դերենիկի քեռորդի Հասան Արծրունու ջանքերով ձախողվում է Տարոնին տիրելու Դերենիկի փորձը։ Իր կյանքի վերջին տարիներին Դերենիկը Հերի և Սալմաստի ամիրաներից նվաճում է Հեր և Զարևանդ գավառները[3], որոնք մտնում էին Հայոց Պարսկահայք նահանգի մեջ և ենթարկվում էին Աշոտ առաջինին[4], բայց այս շրջանում արդեն նվաճվել էին մահմեդական ամիրաների կողմից և գտնվում էին Ատրպատականի սահմաններում[5]։ Դերենիկի մահից (885 թ.) հետո էլ հիշյալ շրջանները շարունակում էին մնալ Վասպուրականի կազմում։ Այսպես, երբ Վասպուրականին տիրացած Գագիկ Ապումրվանը Վաս-

---

[1] VII դ. «Աշխարհացույցում» ներկայացված Վասպուրականը հետևանք էր Հայաստանի երկրորդ բաժանման (591 թ.)։

[2] Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 356։

[3] Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 141։

[4] Constandinus Porphurogenitus, De Thematibus et de administrando imperio, Bonnae, 1840, էջ 191—192։

[5] Հմմտ. J. Marquart, Eransahr nach per Geographie des ps. Moses Xorenaci, Berlin, 1901, էջ 109։

պուրականը բաժանում է դեռահաս Արծրունիների՝ Աշոտի, Գագիկի և Գուրգենի միջև, ապա նրանցից Աշոտը, Վասպուրականի գահերեցի իրավունքները անվանապես վերստանալով՝ բաժին է ստանում Վասպուրականի մեծագույն մասը, «մինչև յամուրն Նախճավանու», իսկ Գագիկն ստանում է Ռշտունիքը՝ «Մոտակացիւք գաւառօք, և որքան իցէ հասումն ուժոյ՝ անդրևս յաշխարհն Մոկաց»։ Գուրգենին բաժին ընկավ Արծրունյաց ոստան Աղբակը՝ Ադամակերտ կենտրոնով և Պարսկահայքի այն շրջանները (Կոտուր, Հեր և այլն), որոնք կից էին Աղբակին և «մինչև ի մուտս Կորդաց (Կորդվաց) և ուր ըստ այնմ իցէ ածել զձեռամբ»[6]։

Արծրունիները կամենում են Վասպուրականին միացնել նաև Մոկք նահանգը։ Այս ժամանակ Անձևացյաց տեր Գուրգենը պատերազմում էր Մոկքի Մուշեղ իշխանի դեմ, որին հաղթում և սպանում է մարտում[7], բայց Մոկքը մնում է աննվաճ։ Իսկ Տարոնը, Սասունը և Աղձնիքը նվաճում է Միջագետքի Ամիրա ահմադ Շայբանին[8], որը ոտնձգություններ էր կատարում նաև Վասպուրականի դեմ։ Նա ձերբակալեց Արզնի ամիրա Ապլմախրին, որը փեսայացել էր Արծրունիներին և դավանում էր քրիստոնեություն[9]։

896 թ. Ատրպատականի ամիրա Ափշինը, Սմբատ Բագրատունի թագավորին դաշնակցած, Աշոտ Արծրունու հետ հաշվեհարդարի նստելու դիտավորությամբ արշավեց Վասպուրական[10]։ Ափշինը ասպատակներ է սփռում Վասպուրականում և տիրանալով Վանին, Արծրունի եղբայրներին տեղափոխում է Ջդմար և Սրինգ բերդերի մատույցներում[11], Վասպուրականից անջատվում են Պարսկահայքից նվաճած շրջանները։

Վասպուրականի պատմության համար կարևոր նշանակություն ուներ Նախճավան քաղաքի և նրան հարող գավառի հարցը։ Հայոց հնագույն այս քաղաքը Բագրատունյաց թագավորության հաստատման շրջանում, բնականաբար, մտավ նրա մեջ։ Նախճավանը կարևորագույն այն հանգուցակետն էր, որն ուժեղացնում էր Վասպուրականի քաղաքական շփումը Այրարատի ու Սյունիքի հետ։ Հայոց պատմության փորձից ելնելով, Բագրատունի թագավորները քաջ գիտակցում էին, որ Նախճավանը կարող է հենակետ ծառայել Ատրպատականի համար ընդդեմ Հայաստանի։ Հարմարագեպ պահին Ատրպատականի ամիրան կարող էր Նախճավան—Գողթն—Ռվին միջնորմով ջլատել հայոց ուժերը։ Իսկ եթե քաղաքը գտնվեր Վասպուրականի կազմում, Հայաստանի դեմ ոտնձգությունների դիմելիս Ատրպատականի տերերը առաջին հերթին պիտի ըախվեին Արծրունիներին։ 902 թ. Սմբատ առաջին թագավորը Նախճավանը նվիրում է իր քեռորդուն՝ Վասպուրականի գահերեց Աշոտ Արծրունուն, Մանազկերտի տակ կայսրիկների դեմ շահած հաղթանակում նրա մատուցած օժանդակության համար[12]։ Ճիշտ է, այս քաղաքը տակավին VII դ. Աշխարհացույցում հիշատակվում է Վասպուրականի կազմում[13],

6 Թովմա Արծրունի, էջ 374։
7 Նույն տեղում, էջ 378։ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 177։
8 Թովմա Արծրունի, էջ 380։ Հովհ. Դրասխանակերտցի, էջ 174։
9 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 173—174։
10 Թովմա Արծրունի, էջ 386—387, 449։
11 Նույն տեղում, էջ 380, 449։
12 Նույն տեղում, էջ 397։
13 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 109։

բայց VIII դ. սկզբին, երբ հայոց նախարարների, այդ թվում և Արծրունիների ճնշող գերակշռությունը ոչնչացվեց արաբների կողմից, քաղաքը խլվում է թուլացած Արծրունիներից և դրվում արաբ ամիրայի գերիշխանության տակ։ Քանի որ Նախճավանը տրվեց Աշոտ Արծրունուն (902 թ.) նրա կատարած ծառայության դիմաց, այն դարձավ վերջինիս պայմանական և ոչ թե ժառանգական, անօտարելի սեփականությունը (թեև Արծրունի պատմիչը հակված է այն ժառանգական համարելու), ուստի Աշոտ Արծրունու մահից հետո 964 թ. հայոց թագավորը Նախճավանը խլեց Վասպուրականից և որոշ ժամանակ անց դրեց Սյունիքի տերերի իրավասության տակ։ Սա երևում է հետևյալ փաստից. երբ 904 թ. Աշոտ Արծրունու մահից հետո նրա եղբայրներ Գագիկն ու Գուրգենը Վասպուրականն իրար մեջ են բաժանում, ապա նրանցից ոչ մեկի բաժնում Նախճավանը չի հիշատակվում[14]։ Հովհ. Դրասխանակերտցու կարծիքով Գագիկ և Գուրգեն Արծրունիների տոհմական արժանապատվությունը վիրավորվում է հայոց թագավորի կատարած այդ քայլից, քանի որ Նախճավանը, «թէ ի հաւու և ի հօրէ նոցունց (իմա՝ Արծրունիների— Վ. Վ.) իսկ տան և ազգի պատշաճեալ» էր[15]։ Բայց Սյունիքի համար ավելի մեծ էր այդ քաղաքի տնտեսական դերը, քանի որ այնտեղ գրեթե բացակայում էին քաղաքները։ Նախճավանը հայոց թագավորի կողմից Սյունիքին է տրվել ամենայն հավանականությամբ 908 թ., երբ Սմբատ առաջինի համար աներկբայորեն պարզ դարձավ Յուսուֆի և Գագիկ Արծրունու մերձեցումը։

904 թ. գահերեց դարձած Գագիկ Արծրունին և իր աթոռակից եղբայրը՝ Գուրգենը Վասպուրականը բաժանում են իրար միջև։ Անանուն Արծրունու տվյալներից երևում է, որ Վասպուրականի տասնչորս գավառներ նվաճվել էին հարևանների կողմից, բայց չորս նոր գավառներ էլ միացել էին նրան[16]։ Պատմիչը թվում է Վասպուրականի մեջ տվյալ շրջանում եղած գավառները, թվով քսանյոթ, որոնք բաժանում է երկու մասի՝ հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան։ Առաջին մասը՝ թվով 15 գավառ, կազմում էր Գագիկի բաժինը (Ճուաշ, Թոռնավան, Արտազ, Մարդաստան, Գառնի, Առբերանի, Աղանդոտ, Բառիլովիտ, Պալունիք, Մեծնունիք, Տոսպ-Ռշտունիք, Բոգունիք, Գուգան-Արտաշեսյան)։ Հյուսիս-արևելյան մասը (11 գավառ) Գուրգենի բաժինն էր՝ Անձահի Ձոր, Կրճունիք, Կուղանովիտ, Բուն Մարդաստան, Արճիշակովիտ, Առնոոտն, Մեծ և Փոքր Աղբակ, Ակե, Տայդրյան, Ըռնա և Զարեհավան։ Ընդսմին, վերը թված գավառներից 4-ը՝ Բառիլովիտը՝ Գագիկի բաժնից և Տամբերը, Ըռնան ու Զարեհավանը՝ Գուրգենի բաժնից, բացակայում են VII դ. Աշխարհացույցում, բայց ինչպես հայտնի է, վերջինում հաշվվում էր ոչ թե 26, այլ 35 (մի այլ խմբագրության մեջ՝ 36) գավառ։ Հետևաբար Աշխարհացույցի մեջ ներկայացված Վասպուրականից 13 (կամ 14) գավառ բացակայում են Անանուն Արծրունու մոտ։ Ի՞նչ էր տեղի ունեցել։ Պարզ է, որ անչափված գավառները նվաճել էին հարևան մահմեդական տիրողները։ Սա ծանրակշիռ մի հանգամանք էր, որի ուժով Գագիկ Արծրունու իշխանության սկզբնաշրջանում՝ 904—908 թթ. Արծրունիների ուշադրությունը գրավողը ոչ թե Բագրատունիների, այլ մահմեդական տիրողների հետ ունեցած հակասություններն էին։ Ուստի Վասպուրականի պառակտումը Բագրատունիների

[14] Թովմա Արծրունի, էջ 403—404։
[15] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 209։
[16] Թովմա Արծրունի, էջ 403—404։

կենտրոնական թագավորությունից դեռևս տեղի ունենալ չէր կարող։ Արծրունիները հնազանդեցրին հարևան ցեղապետներից Մայմանկի որդի Շապուհին, որը գրավելով Կորճեից Ճահուկ գավառն ու Ագարակի բերդը հիշյալ գավառում, Արծրունիներին վերաբերվում էր բիրտ ամբարտավանությամբ։ Արծրունիները Շապուհի դեմ ձեռք են առնում արմատական միջոցառումներ[17]։ Եվ Կորճեքի Ճահուկ գավառը ևս միացվում է Վասպուրականին։

Ավելի կարևոր նշանակություն ուներ Մոկք նահանգի միացումը Վասպուրականին։ Աշոտ Արծրունու գահերեցության ժամանակ Մոկքը կախման մեջ դրվեց Վասպուրականից։ Աշոտի մահից հետո (904 թ.) Մոկաց Բագրատունի իշխանները հրաժարվեցին հարկ տալ Արծրունիներին։ Ուստի Գագիկ Արծրունին ձմեռային խստաշունչ պայմաններում զորք է մտցնում Մոկք, այն կցելով Վասպուրականին[18]։ Որոշ ժամանակ անց Գուրգեն Արծրունին հետ է նվաճում Պարսկահայքի Տամբեր և Ըռնա գավառները, ինչպես և Կորճեքից Ապուջափրի բերդը[19]։

908 թ. Վասպուրականում ստեղծվեց առանձին թագավորություն։ Արծրունիները, որ իրենց հորջորջում էին «ամենայն Հայոց թագավոր» տիտղոսով[20], բնականաբար ձեռք էին զարկելու իրենց թագավորության ընդարձակման գործին։ Աներկբա է, որ Գագիկ Արծրունին «ամենայն Հայոց թագավոր» չէր կարող դառնալ, քանի որ Հայաստանի սիրտը հանդիսացող Այրարատը նրա իրավասությունից դուրս էր։ Իրապես նա թագավորեց Վասպուրականում, Մոկքում և հարևան մի քանի գավառներում։ Ճիշտ է, նա փորձեր արեց Այրարատին տիրանալու, բայց այդ փորձերը, ինչպես կտեսնենք ստորև, պսակվեցին լոկ մասնակի հաջողությամբ։ Արծրունի պատմիչը իր տոհմական հակումներին տուրք տալով, հակամետ է Գագիկ Արծրունուն «ամենայն Հայոց թագավոր» համարելու մտքին, բոլորովին չակնարկելով այն մասին, թե ինչպիսի վնաս էր հասցնում այդ թագավորության ստեղծումը Հայաստանի միասնության գործին։

Յուսուֆը 909 թ. գրավեց Նախճավանը և այն վերադարձրեց ոչ թե Արծրունիներին, այլ ընծայաբերեց իրեն հավատարիմ մի ամիրայի, որպեսզի իրականացնի իր փայփայած ծրագիրը, հանուն որի նա ընտրել էր Արծրունիներին մերձենալու ուղին, այն է՝ Դվին—Նախճավան—Գողթն միջնորմով սեպ խրել Վասպուրականի և Բագրատունյաց թագավորության միջև։ Գագիկին միամտացնելու միտումով Յուսուֆը նրան ուղարկում է Բագրևանդ նվաճելու, որը կարծես լինելու էր Այրարատին տիրանալու՝ Գագիկի ջանքերի իրականացման սկիզբը։ Բայց իրապես հենց այդտեղ էր, որ հողմացրիվ եղան Յուսուֆի նկատմամբ Արծրունի գահակալի սպասելիքները։ Բագրևանդի Վաղարշակերտ (այժմ Ալաշկերտ) ամրոցի պատերի տակ Գագիկը համառ դիմադրության հանդիպեց[21]։ Սղանված բազմաթիվ հայ և արաբ զինվորների հետ գերեզման գտան նաև նրա՝ ամենայն Հայոց թագավոր դառնալու հույսերը։ Դաշնակիցները շուտով դառնում են թշնամիներ։ Այլ ելք հնարավոր չէր։ Միևնույն նպատակին՝ Հայաստանին տիրանալուն էին ձգտում թե՛ Գա-

17 Նույն տեղում, էջ 454—455։
18 Նույն տեղում, էջ 458։
19 Նույն տեղում, էջ 416—417։
20 Նույն տեղում, էջ 466—467։
21 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 230—231։

գիկը և թե՛ Յուսուֆը։ Տարբերությունն այն էր, որ Յուսուֆը կամենում էր ոչնչացնել Հայոց թագավորությունը, մինչդեռ Գագիկի նպատակն էր, ընդհակառակը, պահպանել այն, միայն Արծրունիների արքայական մականի ներքո։

914 թ. գարնանը Յուսուֆը իր ուժերը նետում է Վասպուրականի թագավորության դեմ։ Ատրպատականի բանակի համար հենակետ է ծառայել նաև Ռոտկաց (Ռոստակ, Ռոտկա) գավառը[22], որը Հյուբշմանը տեղադրում է Պարսկահայքում[23], թեև VII դ. Աշխարհացույցում այդ գավառի անունը չի հիշատակվում։ Ս. Երեմյանի կարծիքով միջին դարերում Ռոտկաց անունով էին կոչվում Հեր և Զարևանդ գավառները։

Յուսուֆի բանակին Ռոտկացից այն կողմ ծավալվել չի հաջողվում։ Ուրեմն պիտի ենթադրել, որ Պարսկահայքի մի մասը (Ռոտկաց գավառից հյուսիս-արևմուտք) Գագիկ Արծրունու թագավորության ժամանակ գտնվում էր Վասպուրականի կազմում։ Ճիշտ է, նույն 914 թ. Յուսուֆին հաջողվեց խուժել Վասպուրական, բայց աշնանն արդեն վասպուրականցիները նրան դուրս են շպրտում[24]։ Մյուս տարում, օգտվելով բարեդեպ պայմաններից, Գագիկ Արծրունին նվաճում է Արտազ, Կոգովիտ, Բագրևանդ և Մասյացոտն գավառները[25]։ Ումի՞ց նվաճեց հիշյալ գավառները։ Ամենայն հավանականությամբ դեռևս ուշքի չեկած Բագրատունյաց թագավորությունից։ Յուսուֆի հետ թշնամանալուց հետո էլ Գագիկը չէր հրաժարվում Այրարատին տիրանալու մտքից, ինչի համար հետագայում հազիվ թե նման բարենպաստ պայմաններ լինեին։ Մյուս կողմից Բյուզանդիան Տարոնի տերերին գցում է իր ազդեցության տակ։ Կոնստ. Ծիրանածինի վկայությամբ, Գագիկ Արծրունին ցուցաբերում է սուր դժգոհություն կայսրության դավադիր խաղերի նկատմամբ[26]։ Երբ Ատրպատականի խորվարալ ամիրաներից մեկը՝ Գիլյանի տեր Ալ-Հաշքարին 936 թ. ներխուժում է Բագրատունյաց Հայաստան, ապա Աբաս Բագրատունի թագավորին օգնության է շտապում նաև Գագիկ Արծրունին։ Աբաս թագավորը հարկադրված է լինում նահանջել Վրաստան, մինչդեռ Գագիկը իր ուժերը շարժում է Խորվիրապի մոտ արդեն մարտակարգ ընդունած Ալ-Հաշքարիի հրոսակների դեմ, պարտության մատնելով նրանց։ Այնուհետև Գագիկը գրավում է Դվինը և կամենում է հրդեհի մատնել այն, բայց, ինչպես վկայում է Արծրունի պատմիչը, քաղաքի հայ և մահմեդական մեծամեծները գետնատարած հայցում են խաղաղություն, տալով հարկ և պատանդներ[27]։ Գագիկը ընդառաջում է նրանց։ Դվինցիների կողմից պատանդ և հարկ տալու պարտավորության ստանձնումը խոսում է այն մասին, որ Դվինը հպատակության մեջ է դրվել Գագիկ Արծրունուց։ Հարկ է նշել, որ այս փաստը ուշադրության չի արժանացել հայագիտական գրականության մեջ։ Անշուշտ այդ հպատակությունն ունեցել է վաղանցիկ բնույթ։ Ռուս պատմաբան Վ. Վասիլևսկու կարծիքով Դվինը մնացել է Վասպուրականի թագավորության կազ-

---

22 Նույն տեղում, էջ 230—231։

23 Հյուբշման, Հին Հայոց տեղվո անունները, Վիեննա, 1907, էջ 92։

24 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 290—291։

25 Թովմա Արծրունի, էջ 468, հմմտ. Հովհ. Դրասխանակերտցի, էջ 327։

26 Константин Багрянородный, Об управлении государством (Изв. гос. Ак. ист. мат. культуры, вып. 91, М.—Л., 1934, էջ 24)։

27 Թովմա Արծրունի, էջ 491—492։

մում նաև Գագիկ Արծրունու հաջորդների ժամանակ[28]։ Նորագյուտ աղբյուրներից հայտնի է, սակայն, որ տակավին 941 թ. Դվինն արդեն ընկել էր Ատրպատականի քուրդ տիրակալ Դայսամ Իբրահիմի գերիշխանության տակ[29], իսկ 948 թ. Դվինում հաստատվում է Շադդադյան Մուհամմադը[30], որի հետ ևս վատ չէին Արծրունիների հարաբերությունները։ Երբ 942 թ. Սալարյան Մարզուբանը հարձակվում և պարտության է մատնում Դայսամ Իբրահիմին, ապա վերջինս փախչում է Վասպուրական, իր վաղածանոթ Գագիկ թագավորի մոտ[31]։ Հետագայում, 952 թ. Դայսամ Իբրահիմը կրկին փորձեց տիրել Ատրպատականին։ Սակայն նա նորից պարտություն է կրում և ստիպված փախչում է Վասպուրական՝ Դերենիկ թագավորի մոտ, որից ստանում է զգալի օժանդակություն[32]։ Նույնը տեղի ունեցավ Դվինին տիրացած և ծագումով քուրդ Շադդադյան Մուհամմադի հետ, որը Սալարյան Մարզուբանից 954 թ. պարտություն կրելով, յուրայինների հետ փախավ Վասպուրական, Դերենիկ Արծրունու մոտ։ Ըստ երևույթին Մուհամմադը Դերենիկից օգնություն է խնդրել, բայց վերջինս զգուշավոր նկատառումներով հրաժարվել է օգնություն ցույց տալուց, որից հետո, թերևս Դերենիկի դրդմամբ, Մուհամմադը մեկնեց Բյուզանդիա, այնտեղից օգնություն հայցելու, բայց ստիպված էր 955 թ. ձեռնունայն վերադառնալ[33]։

Դայսամ Իբրահիմի և Արծրունի թագավորների միջև պետք է ինչ-որ կապ եղած լինի, որի շրջանակներում Դայսամը ճանաչել է նրանց ավագությունը։ Նույնը պիտի ասել նաև առաջին Շադդադյան Մուհամմադի մասին։ Սա հետևանք էր այն բանի, որ քուրդ ցեղապետները կոզմնորոշվում էին քրիստոնյա տիրողների (Բյուզանդիա, Հայաստան և այլն) կողմը։ Հետագայում Բյուզանդիան հովանավորում էր Հարավային Հայաստանի մի զգալի մասին տիրացած քուրդ ցեղապետներ Մրվանյաններին[34], որոնց տիրապետության ժամանակ էլ (980-ական թթ.), ըստ երևույթին, սկիզբ դրվեց քուրդ տարրի ներթափանցմանը Հարավային Հայաստան։ 940 թ. Վասպուրական է ներխուժում Համդանիդյան Սայֆ-ադ-Դաուլան[35], որը ևս չխախտեց Վասպուրականի թագավորության սահմանների անձեռնմխելիությունը։ Ճիշտ է, հարկ եղավ, որ Գագիկ Արծրունու որդի Դերենիկը, ապա նաև Գագիկը անձամբ մեկնեն

---

[28] В. Васильевский, Советы и рассказы византийского боярина XI века. Журн. Мин. просв., ч. 206, СПб., 1881, էջ 110—111.

[29] А. Быков, Дайсам ибн Ибрахим ал-Курды и его монеты, „Эпиграфика Востока", X, 1955, էջ 31—32։

[30] V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, էջ 8։ Ա. Տեր-Ղևոնդյան, Մուսաջիմ Բաշիի XI—XII դարերի անանուն աղբյուրը Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին։ «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, էջ 475։

[31] „Из Тарих-ал-Камиль Ибн-ал-Асира", пер. П. К. Жузе, Баку, 1940, էջ 94—95; Markwart, Südarmenien, էջ 491, „Эпиграфика Востока", X, էջ 30։

[32] Ибн-ал-Асир, էջ 101։

[33] V. Minorsky, Studies, էջ 12։

[34] Ասողիկ, էջ 276։

[35] Freitag, Geschichte der Dinastien Hamdaniden in Mosul und Aleppo (Zeitschrift der Deutschen morgenlandischen Gesselschaft, B. X., Leipzig, 1856, էջ 464—467), Markwart, Südarmenien, էջ 460, M. Canard, Recueil des textes relatifs a Sayf ad Daulah, Paris, 1934, էջ 76—78։

խլաթին արդեն տիրացած Սայֆ-ադ-Դաուլայի մոտ[36], սակայն Գագիկ թագավորը փոքր զիջումներից այն կողմ չանցավ։ Արաբ մատենագիր Իբն-ալ-Ազրակիի վկայությամբ Սայֆ-ադ-Դաուլան Վասպուրականից խլում է Շահրան և ալ Համիդ բերդերն իրենց հարող շրջաններով[37], որոնք պետք է զետեղել Մոկքի հյուսիսային մասում, Ռշտունիքին հարող շրջաններում, որտեղ եղած երկաթահանքերը չէին կարող չգայթակղեցնել Բյուզանդիայի դեմ պատերազմող Սայֆ-ադ-Դաուլային։ Բացի այդ, Բաղեշի լեռնանցքի (Զորապահակ) մատույցներին հսկելու ձգտումը ևս ունեցավ իր դերը։

Այսպիսով Գագիկ Արծրունու օրոք (908—943) Վասպուրականի թագավորությունը ձգվում էր հյուսիսից հարավ՝ Արաքսից մինչև Կորգվաց լեռները և արևմուտքից արևելք՝ Վանա լճից մինչև Կապուտան (Ուրմիո) լիճը։ Հարավում նրա սահմանային շրջաններն էին Մոկաց աշխարհի հարավային գավառները, Կորճեքի Ճահուկ գավառի հարավային սահմանը կազմող Մեծ Զաբ գետը, արևելքից՝ Պարսկահայքի արևմտյան շրջանները, Կարմիր գետ՝ ավազանով (մատենագրական տվյալներից չի երևում, որ այս մասում գտնվող Գաբիթյան և Պարսպատունիք գավառները մտած լինեին Արծրունյաց թագավորության մեջ)։ Այնուհետև Կարմիր գետի և Արաքսի միախառնման կետից սահմանը Արաքսով ձգվում էր մինչև Արտաշատ և իր մեջ ներառնելով Դվին քաղաքն ու իրեն հպված շրջանները (Գինո լեռը և այլն), մոտավորապես Դրասխանակերտ գյուղի արևմտակողմից թեքվում էր հարավ-արևմուտք, իր մեջ ամփոփելով Այրարատի Մասյացոտն, Կոգովիտ, Բագրեվանդ և Ծաղկոտն գավառները, Աղիովիտ գավառի արևմտյան մասով հասնում մինչև Վանա լիճը։

Գագիկ Արծրունու հաջորդների ժամանակ հիմնականում պահպանվեց Վասպուրականի թագավորության սահմանների ամբողջությունը, թեև Արծրունի թագավորներն ստիպված էին Սալարյանների հետ խաղաղություն պահպանել, նրանց համեստ չափերի հասնող հարկագումար տալով։ Իբն Հաուքալի հաղորդմամբ Դերենիկ Արծրունի թագավորի օրոք (943—958) Վասպուրականի թագավորությունը Սալարյան Մարզուբանին վճարում էր տարեկան 100 հազ. դիրհեմ գումարի հասնող հարկ[38]։ Երկրի մասնատվածության պայմաններում որոշ գավառներ ինքնաբերաբար անջատվում են Վասպուրականի թագավորությունից։ Տակավին Գագիկ Արծրունու թագավորության վերջին շրջանում, մոտավորապես 936—937 թթ. Համդանյանները տեր են դառնում Աղձնիքին, այդ թվում և Վասպուրականի թագավորության մեջ մտնող Ճահուկ գավառին։ Իսկ Գագիկի թագավորությանը հաջորդող շրջանում Վասպուրականի թագավորությունից անջատվում են Այրարատի Կոգովիտ, Ծաղկոտն, Բագրևանդ և Մասյացոտն գավառները։ Կոգովիտում և ըստ երևույթին նաև Մասյացոտնում դրանից հետո ստեղծվում է անկախ իշխանություն, հավանաբար Արծրունիների գերիշխանության ներքո[39]։

---

[36] Zeitschrift der Deutschen morg. Gesselsch., B. X, էջ 464—465։

[37] Մակվարտը ալ-Համիդ բերդը նույնացնում է Ամյուկի հետ (Südarmenien..., էջ 160)։

[38] V. Minorsky, The Caucasian vassals of Marzuban in 344/945 (Caucasika, IV, 1953, էջ 519—500)։

[39] Const. Porphurogenitus, De Cerimonis, Bonnae, 1829, էջ 687։ Ասողիկը 1000 թ. Կոգովիտի և Ծաղկոտնի տեր է համարում Աբուսահլ իշխանին (Ստ. Տարոնեցի, էջ 278)։

Վասպուրականի թագավորության համար մեծագույն սպառնալիք էր Բյուզանդիայի առաջխաղացումը դեպի արևելք։ Արդեն 960-ական թթ. կայսրությունը իրար հետևից նվաճում է հարավային Հայաստանի արաբական ամիրայությունները։ 960 թ. Տարոնը ևս միացվեց կայսրությանը[40]։ Անշուշտ, հերթը հասնելու էր նաև Վասպուրականի թագավորությանը։ Սակայն բուլղարական սպառնալիքը[41] Վասիլ II կայսրին հետ պահեց այդօրինակ քայլից։

960-ական թթ. Վասպուրականի թագավորությունն ապրում է քաղաքական մասնատվածության պրոցես, բաժանվելով երեք մասերի։ Պարսկահայքից Վասպուրականին անցած շրջաններն արդեն անջատվել էին նրանից և այդտեղ իշխող ամիրաները վարում էին ուժեղ շեշտված հակահայկական քաղաքականություն։ Այսպես, Ասողիկը վկայում է, որ 980-ական թթ. Հեռի ամիրա Ալևորը բուռն թշնամանք էր տածում Վասպուրականի նկատմամբ[42], իսկ 990 թ. Հերում իշխող մի այլ ամիրա՝ Ռավվադյան Աբլհաճան ասպատակում է Վասպուրականը, գերի տանելով Անձևացյաց թագավոր Դերենիկին[43]։ 998 թ. հայ-վրացական ուժերի դեմ ռազմի ելած Ատրպատականի էմիր Մամլանի բանակի արշավուղին անցնում էր Վասպուրականով[44]։

999 թ. Վասիլ II կայսրը վերստին իր հայացքը հառում է Արևելքի կողմը։ Այս անգամ առիթը Տայքն էր։ 1000 թ. Դավիթ Կյուրապաղատի կտակած հողերին տեր դառնալու դիտավորությամբ կայսրը եկավ Տայք։ Երբ վերջինս մեկնեց Մանազկերտ, ապա այնտեղ՝ նրա մոտ փութացին Վասպուրականի թագավորներ Գուրգեն և Սենեքերիմ Արծրունիները[45]։ Հարկ է ենթադրել, որ Վասիլ II-ը Արծրունիներին է շնորհում մի քանի քաղաքներ իրենց հարող շրջաններով, այն է՝ Խլաթը, Մանազկերտը, Բերկրին, Արճեշը և Արծկեն։

Հետազոտողները (Հ. Մարկվարտ, Ս. Երեմյան և ուրիշներ) թեև հիշյալ շրջանները չեն մտցնում Վասպուրականի թագավորության մեջ, սակայն մի հայսմավուրքում, Սենեքերիմի կողմից Վասիլ II-ին տրված շրջանների մասին պատմելիս, նշվում է, որ բացի մեծաթիվ բերդերից ու գյուղերից, Սենեքերիմ Արծրունին կայսեր տվեց նաև «Քաղաքս Ժ(10) զԽլաթ եւ զՓոխց, զՀիղան եւ զԿեցան, զՈստան, եւ զՎան, զԲերկրի եւ զԱրճեշ, զԱրծկե եւ զՄանծկերտ, եւ զբոլոր թումանս Խլաթայ ի լերանցն Սասնոյ, մինչև ի Սեւան եւ ի Նրւան (թերևս Նախճավան—Վ. Վ.) ի Սալամաստ եւ ի Ջղմար...»[46]։

Կայսեր կողմից Արծրունիներին ընծայաբերած շրջանները մի որոշ ժամանակ գտնվում էին Տայքի կյուրապաղատության կազմում[47]։ Ուստի դրանք Արծրունիներին գիջելը կարող էր հակադրություն ստեղծել նրանց և այդ շրջանների նկատմամբ իրավատերերի հավակնություններ ունեցող Տայքի իշխանների միջև, չենք խոսում արդեն մահմեդական ամիրաների և Արծրունի-

---

40 Ստեփանոս Տարոնեցի, էջ 183։

41 „История Болгарии", т. I, М., 1954, էջ 95։

42 Ստեփանոս Տարոնեցի, էջ 199—200։

43 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 30—33։

44 Ստեփանոս Տարոնեցի, էջ 269—270։

45 Նույն տեղում, էջ 281, հմմտ. Մատթ. Ուռհայեցի, էջ 42։

46 Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 100։

47 Ստ. Տարոնեցի, էջ 192։

ների միջև եղած թշնամանքի մասին։ Կայսրն ուներ մի հետին միտք ևս՝ լիակատար կախման մեջ գցել Արծրունիներին, հնշտացնելով հարավային Հայաստանի նվաճման գործը։ Սասունի իշխանները, կանխազգալով Բյուզանդիայի կողմից սպասվող սպառնալիքը, մոտավորապես 990-ական թթ. արդեն մտել էին Արծրունիների գերիշխանության տակ։

Այդպիսով Սասունը ևս մտնում էր Վասպուրականի թագավորության մեջ։ Այս մասին վկայում է արաբ պատմիչ Իբն-ալ-Ազրակին[48]։ Այս տեսակետից հետաքրքիր է մի ձեռագրի հիշատակարանի հաղորդածը։ «Բսկ թագաւորն Վասպուրականի էր Սենեքերիմ բարեպաշտն Արծրունեաց, որ է Սասունք»[49]։

1021 թ. Վասիլ II-ին հաջողվեց իրականացնել Հայաստանի նվաճման իր փայփայած ծրագրի մի զգալի մասը ևս։ Դադարեց գոյություն ունենալուց Վասպուրականի թագավորությունը, որի մեջ մտնող հողերը կցվեցին Բյուզանդիային։ Հայ մատենագիրները դառը կսկիծով են արձանագրել այդ իրադարձությունը[50]։

---

48 Markwart, Südarmenien, էջ 470—471։

49 Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հատ. 1, էջ 77։

50 Մատթեոս Ուռհայեցի, էջ 49։ «Անանուն ժամանակագրություն», կազմեցին՝ Հ. Մանվելյան և Հ. Աբրահամյան, Երևան, 1940, էջ 16։ «Մանր ժամանակագրություններ», մասն II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 130—131 և այլն։